

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 18/3

15 մայիսի 2012թ.

Քննարկվեց «Մերի Հարդի» ՍՊԸ 04.05.2012թ. գանգատը « ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի 19.04.2012թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 201515 որոշման դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն « ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 16.03.2012թ. թիվ 1101610 ստուգման ակտի «Մերի Հարդի» ՍՊԸ կողմից խախտվել են « Կառավարության 26.08.2004թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները, որի համար կիրառվել է «Սկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված պատասխանատվության միջոցը: Հաշվի առնելով, որ կատարված իրավախախտումը « ՎԻՎ օրենսգրքի 169.1 հոդվածի 1-ին մասի համաձայն առաջացնում է վարչական պատասխանատվություն, « ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի 19.04.2012թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 201515 որոշմամբ «Մերի Հարդի» ՍՊԸ տնօրենը վարչական իրավախախտումների վերաբերյալ « օրենսգրքի 169.1 հոդվածի 1-ին մասի համաձայն ենթարկվել է վարչական տույժի՝ գումարով 25.000 դրամ:

«Մերի Հարդի» ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

« ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ կողմից ընկերությունում կատարվել է ՀԴՄ շահագործման կանոնների պահպանման ճշտության ստուգում, որի արդյունքում 16.03.2012թ-ին կազմվել է թիվ 1101610 ակտը: Նշված ակտի 2-րդ կետում նշված է. «Գանձապահը գումարը մուտքագրեց ՀԴՄ և չտրամադրեց « Կառավարության 26.08.2004թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված վավերապայմաններով դրամակղային չեկ, որի դարձերեսին առկա է հարկային վիճակահանության հատուկ համար»:

Ըստ գանգատի, քանի որ 16.03.2012թ-ի թիվ 1101610 ակտով արձանագրված խախտումը չի առաջացրել հարկերի նվազեցում, ուստի « ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի 19.04.2012թ-ի թիվ 201515 որոշումը կիրառելի չէ:

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության տնօրենի և « ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ ներկայացուցչի ներկայացված փաստրկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ ընկերության գանգատը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն « ԿԱ ՊԵԿ նախագահի 16.02.2012թ. թիվ 1101610 հանձնարարագրի « օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «Մերի Հարդի» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է հսկիչ-դրամակղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 16.03.2012թ-ին կազմվել է թիվ 1101610 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 300.000 դրամ:

Ստուգման ակտի 2-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային տեսուչ Արզիստ Հայրապետյանի կողմից 05.03.2012թ. ժամը 16:00-ին ք.Երևան, Սայաթ-Նովա 33 շ. 79 հասցեում «Մերի Հարդի» ՍՊԸ-ին պատկանող հագուստի խանութից կատարվել է գնում 12.000 դրամի չափով՝ 1 հատ դրամապանակ, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Գանձապահը գումարը մուտքագրեց ՀԴՄ, սակայն չտրամադրեց « Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված վավերապայմաններով դրամարկղային չեկ, որի դարձերեսին առկա է հարկային վարչարարությանն օժանդակելու նպատակով վիճակահանության հատուկ համար:

Ստուգման ակտով արձանագրված խախտման համար « ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի 19.04.2012թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 201515 որոշմամբ

<Մերի Հարդի> ՍՊԸ տնօրենը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 1-ին մասի հատկանիշերով ենթարկվել է վարչական տույժի՝ գումարով 25.000 դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 1-ին մասի համաձայն. <Հաշվապահական հաշվառումից բացի, օրենսդրությամբ նախատեսված այլ հաշվառում (գրանցում) չվարելը կամ ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելը կամ հաշվառումը (գրանցումը) այնպիսի խախտումով վարելը կամ հայտարարագրի (բացառությամբ ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրի) կամ հաշվարկի կամ հաշվետվության (այդ թվում՝ հաշվապահական) կամ հարկման կամ պարտադիր սոցիալական ապահովության վճարի հիմք հանդիսացող այլ փաստաթղթի մեջ այնպիսի կեղծ տվյալներ մտցնելը, որոնք կարող են առաջացնել (առաջացրել են) հարկի կամ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարման նվազեցում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկից մինչև քսանհինգապատիկի չափով>:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով այն հանգամանքը, որ ստուգման ակտով արձանագրված խախտումը հարկի կամ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարման նվազեցում չի առաջացրել, հետևապես Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 1-ին մասով նախատեսված պատասխանատվության միջոցը կիրառելի չէ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի 19.04.2012թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 201515 որոշումը:



Հանձնաժողովի նախագահ՝

S.ՔԱՐՍԵՂՅԱՆ